

1760



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«18» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 033 - 25

Նախաձեռնող՝

«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյի 34/1

Գործունեությունը՝

Երանոս բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 033 - 25

«13» փետրվարի 2025թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր

Ներածական մաս. «Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Երանոս բնակավայրում կառուցել միջնակարգ դպրոց:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

Նկարագրական մաս. Միջնակարգ դպրոցի կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում՝ Գեղարքունիքի լեռնաշղթայի հարավարևելյան ստորոտին, Ձազ գետի ստորին հոսանքում, մարզկենտրոն Գավառից 25 կմ հարավ-արևելք:

Համաձայն ինժեներատեխնիկական եզրակացության՝ գրունտային ջրերը գտնվում են 2.0 մ-ից խորը հորիզոններում: Նախատեսվում է նախապես կատարել դրենաժային համակարգի կառուցում և հիմնահատակների արտապատման աշխատանքներ:



Նախատեսվում է շենքի հարկերում տեղադրել կրակմարիչներ: Շենքն ապահովված կլինի էվակուացիոն ելքերով:

Դպրոցի գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի: Գազամատակարարումը կատարվելու է 180 մ հեռավորության վրա գտնվող գազատարից՝ պողպատե խողովակներով:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է տրանսֆորմատորային ենթակայանից, որը կառուցապատման փուլում կապամոնտաժվի և կտեղափոխվի դպրոցին կից տարածք՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ համաձայնեցված:

Դպրոցի ջերմամատակարարումը նախատեսված է կաթսայատնից՝ տաք ջրամատակարարման և ջեռուցման միջոցով: Կառուցվելու է նոր կաթսայատուն 26.38 քմ մակերեսի վրա, որն ապահովված է լինելու անհրաժեշտ օդափոխության, հակահրդեհային, հակաձխային ավտոմատ կառավարման համակարգերով:

Հակահրդեհային անվտանգության նպատակով նախատեսվում է դպրոցում տեղադրել հակահրդեհային հիդրանտներով՝ յուրաքանչյուր հարկում 10 հատ, ինչպես նաև օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտաձման համակարգերով: Օդատարները կտեղադրվեն առաստաղի տակ, իսկ օդի ներածման և արտաձման համար՝ կարգավորող ճաղավանդակներ:

Դպրոցի ջրամատակարարումն իրականացվելու է Մարտունի համայնքի՝ Երանոս բնակավայրի ջրամատակարարման ցանցից:

Երանոս բնակավայրում բացակայում է կոյուղատարը: Ուստի շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է 100 խմ ծավալի սեպտիկ հոր՝ մաքրման կայան: Տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ցանցով կհեռանան բակային ցանց, որը կմիանա հեղեղատարին:

Տանիքում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության նպատակով: Վահանակների ընդհանուր թիվը կազմելու է 202 հատ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերես՝ 8700 քմ /100%/,
- կառուցապատման մակերես՝ 3000 քմ /34.5 %/,
- կանաչապատման մակերես՝ 2146.90 քմ /24.7 %/,
- սավաճքներ՝ 433.50 քմ /4.9 %/,
- օժանդակ կառուցապատում՝ 473.2 քմ /5.4 %/,
- ասֆալթետոնե սպասարկման ճանապարհներ՝ 2370.45 քմ /27.3%/,
- հենապատ, պարիսպ՝ 275.95 քմ /3.2%/,
- դասասենյակների ընդհանուր քանակ՝ 26 հատ,
- աշակերտների թիվը՝ 288 աշակերտ,
- կաթսայատուն՝ 26.38 քմ,
- ավտոկայանատեղի՝ ծառայողական մեքենաների համար՝ 4 հատ,
- մաքրման կայան:

Նախատեսվող գործունեության կառուցապատման ժամանակ կատարվելու են 9424.55 խմ ծավալի հողային աշխատանքներ, որից կատարվելու է 2144.40 խմ ծավալի գրունտների լիցք, հետլիցք՝ 2918.70 խմ, իսկ մնացած՝ 4361.45 խմ ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու



է համայնքի կողմից հատկացված վայր: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքի մեխանիկական գործիքներով և մեխանիզմներով:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 2146.90 քմ մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Մարտունու համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Տնկվելու են կեղծ ռուբախ(ակացիա)՝ 8 հատ, հացենի՝ 11 հատ, բարդի՝ 5 հատ, եղևնի՝ 13 հատ, ընդհանուր՝ 37 հատ ծառեր: Նախատեսվում է սպորտադաշտի կառուցում՝ 3100.20 քմ մակերես խոտածածկով:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատ տարածքի ոռոգումն իրականացվելու է գործունեության տարածքում տեղադրվող մաքրման կայանից դուրս եկող մաքրված ջրերի հաշվին՝ կաթիլային եղանակով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Շահագործման փուլում նախատեսվում է մթնոլորտային արտանետումների վերահսկողության իրականացում, կաթսայատնից արտանետվող գազերի թույլատրելի նորմերի պահպանում, և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևաջրերի և շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր, դրենաժային համակարգի կառուցում, շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկում՝ համապատասխան մասնագիտացված կետերում և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը,



- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել բետոնասալ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է բետոնասալը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվող գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,
- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ, կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինադրի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:
- տանիքում տեղադրվող վահանակների շարքից դուրս գալու դեպքում այն չտեղակայել բաց տարածքներում՝ ուղիղ արևի ճառագայթների տակ: Շարքից դուրս եկած վահանակները տեղակայել փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կամ փոխանակելը:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Ակոպյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան